

**Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեն (այսուհետ Կոմիտե) հայտարարում է գիտական քաղաքականության վարչության գիտական տեղեկատվության և վերլուծության բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 19/1-3.2-6) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու մասին**

Առաջատար մասնագետը՝

1) մասնակցում է գիտության բնագավառի կառուցվածքային բարեփոխումների և գիտության զարգացման հեռանկարային ու նպատակային ծրագրերի, գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերաբերյալ առաջարկությունների, գիտական և գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավման ու օգտագործման արդյունավետության բարձրացման ծրագրերի մշակման համար տեղեկատվության հավաքագրման և վերլուծության, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրման և, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա, սահմանված կարգով վարչական վիճակագրական ռեգիստրների վարման գործընթացին.

2) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հայ գիտնականների ներուժի համախմբմանն ուղղված ծրագրերի, գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանն ուղղված ծրագրերի մշակման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման, համապատասխան շտեմարանի թարմացման, ուսումնասիրության և վերլուծության աշխատանքներին.

3) բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, համապատասխան վիճակագրական հարցաթերթիկներ, զեկուցագրեր, գրություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր:

Նշված պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու համար պահանջվում է՝

\* բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

\* «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին», «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին», «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

\* անհրաժեշտ տեղեկատվությանը տիրապետում.

\* համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

\* ռուսերենին կամ անգլերենին ազատ տիրապետում:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքը հղիության և ծննդաբերության արձակուրդ տրամադրելն է:

Աշխատավարձի չափը կազմում է 150799 (մեկ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննսունինը) դրամ:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ գիտության կոմիտե, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22,

Ընտրությունը կիրականացվի փաստաթղթերի հիման վրա կամ, անհրաժեշտության դեպքում, հարցազրույցով:

Դիմող ՀՀ քաղաքացիները Կոմիտե (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 703 սենյակ, հեռ. 21-01-40-107) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

\* գրավոր դիմում ( ձևը կցվում է ),

\* կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի)՝ պատճենները՝ բնօրինակի հետ միասին.

\* աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճենը՝ բնօրինակի հետ միասին.

\* արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,

\* մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

\* անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:30-ից մինչև 12:30-ը՝ ներկայացնելով անձնագիրը (նույնականացման քարտը) կամ հետևյալ էլ. փոստով՝ [hr@scs.am](mailto:hr@scs.am):

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 14.02.2020թ.:**